«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-158-24.05.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի կարգավորումից ստացվում է այնպես, որ եթե գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը, ապա որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին: Ուստի, վերոնշյալ կարգավորումը օրենքի նախագծի տրամաբանությանը և հոդվածի վերնագրին համապատասխանեցնելու նպատակով առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատարավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:»:

2. Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասի կարգավորումից բխում է, որ վարչական դատարանը վերահասցեագրում է դատական գործը, մինչդեռ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի համաձայն, վարչական դատարանն օժտված է ոչ թե դատական գործը, այլ *հայցադիմումը* վերահասցեագրելու լիազորությամբ: Ուստի առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատարավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Սույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև վարչական կամ սնանկության դատարանի կողմից համապատասխանաբար վերահասցեագրված հայցադիմումի կամ հանձնված գործի նկատմամբ:»: